

ԱՐԵՎԵԼՔԸ «ՄԱՍՆԱ ԾՈՒՆՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՎԱՀՍԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամփոփում: Ժամանակի ընթացքում ձևավորվել են քրիստոնեական մշակույթի երկու թևեր՝ արևելյան և արևմտյան, դրանք միասնաբար ձևավորում են ընդհանուր քրիստոնեական մշակութային համակարգը: Այդ թևերը, աշխարհընկալման առանցքում ունենալով քրիստոնեությունը, երևույթների արտահայտման, դրանց իմաստավորման ոլորտներում ստեղծել են յուրահատուկ միջոցներ, որոնք ինքնության որակներ են, որ արտահայտված են Սուրբ Տեքստի, Լեզվի ու Գրի միասնության մեջ՝ որպես արևելյան մշակույթին բնորոշ որակներ: Դրանց միասնությամբ է հատկանշվում հայոց մշակույթը, որի ձեռքբերումը՝ «Մասնա ծոեր» էպոսը, դրսևորում է երևույթների արտահայտման՝ Արևելքին բնորոշ առանձնահատկություններ, այն է՝ երևույթների ծավալման ժամանակային և ոչ տարածական չափումներ («Գիլգամեշ», Ավեստա, «Մասնա ծոեր», Աստվածաշունչ), որոնք իրենց մեջ խտացնում են ժամանակի քաղաքակրթական շրջափուլեր: Փոքր Միերը գնում է ոչ թե հասարակական կարգը փոխելու (որը բնորոշ է Արևմուտքին), այլ մարդու կատարելագործման ուղիով: Ժամանակը կվերափոխի մարդուն և աշխարհը, դրանից հետո միայն հերոսը կարժանանա հավերժական քնի:

«Ծոերում» կրկնվող մեղքը վերածվում է ճակատագրի՝ ձևավորելով ընդհանուր վիճակ, իսկ Արևմուտքում այն անհատական բնույթ ունի:

Ծիծաղի արքետիպային վիճակը, որտեղ առաջնայինը ծիծաղելի օբյեկտի նկարագրությունն է, դառնում է «Մասնա ծոեր»-ին բնորոշ որակ: Մինչդեռ եվրոպական էպիկական երկերում, չբացառելով ծիծաղի օբյեկտը, առավելապես կարևորվում է ծիծաղի սուրյեկտի՝ ծաղրողի և ոչ թե ծաղրվողի նշանակությունը:

Հիմնաբառեր՝ Սուրբ տեքստ, լեզու, գիր, Արևմուտք, Արևելք, ժամանակային և տարածական չափումներ, «Մասնա ծոեր», Փոքր Մեծ

Ամեն ժողովուրդ, հաղթահարելով ժամանակի հարուցած արգելքները, սեփական ոգորումների շնորհիվ ստեղծում է արժեքներ, որոնք հարստացնում են համաշխարհային մշակույթը:

Այսօր խիստ արդիական են Միխայիլ Բախտինի և նրա հետևորդ Վլադիմիր Բիրլերի տեսական դատողությունները: Դրանք որոշակի հայեցակարգային շրջանակի մեջ են դրել պատմափիլիսոփայական կարևոր ֆենոմենը՝ *միջմշակութային երկխոսությունը*, և ցույց են տվել դրա ինքնաճանաչման և այլ մարդկանց հետ փոխգործակցության հնարավորությունները:

Երկխոսության փիլիսոփայության հիմքն այն գաղափարն է, ըստ որի՝ անհատականությունը ձևավորվում և զարգանում է շփումների շնորհիվ: «Պատմության սուբյեկտ դառնալու և ճանաչման սուբյեկտ դառնալու համար նրան անհրաժեշտ է երկխոսության մեջ մտնել ինքն իր հետ, մեկ այլ անհատի հետ, Աստծու հետ, բնության հետ: Մարդկության ճանաչողական գործունեության հիմքն այլևս ոչ թե մեկնաբանական վերացական-տրամաբանական մտածողությունն է, այլ երկխոսական բնույթ ունեցող գործնականն ու բանավորը, որն ուղղված է այլ մարդկանց հետ փոխգործակցությանը»¹:

Բնականաբար երկխոսության սուբյեկտ են դառնում ոչ միայն անհատները, այլև էթնոսները, մշակույթները, քաղաքակրթությունները և այլն: «Կյանքում ամեն ինչ երկխոսություն է, այսինքն՝ երկխոսական հակադրություն»²:

¹ **Волкова А. А.**, Философское понимание диалога культур в концепциях М.М. Бахтина и В.С. Библиера: сравнительный анализ, Журнал: Logos et Praxis, Статья в выпуске: 4 т. 18, 2019, с. 110.

² **Бахтин М. М.**, Проблемы поэтики Достоевского. М.: Сов. Россия, 1979, с. 75.

Այս իմաստով Բիբլերը մշակույթի զարգացումը դիտարկում է երկդեմ Յանուսի կերպարով, երբ իր դեմքն ուղղում է դեպի այլ մշակույթներ և միաժամանակ խորանում է իր մեջ՝ փորձելով փոփոխել, լրացնել իր էությունը¹:

Ընդունելով այս կարևոր դիտարկումը՝ հարկ է նկատել, որ ցանկացած ժողովրդի մշակույթը, ինքնությամբ հանդերձ, համալրում է մի որոշակի համակարգ, որն էլ իր հերթին ամբողջացնում է համաշխահայինը:

Անտիկ ժամանակներից ի վեր միմյանցից տարբերվում են Արևելքն ու Արևմուտքը՝ որպես երկու վիթխարի համակարգեր: Հին հույները հակադրվեցին Արևելքին, այն ամենին, ինչ Արևելքի սահմաններում էր: Արևմուտք ասելով՝ հասկանում ենք եվրոպական և ամերիկյան մշակույթը, Արևելք ասելով՝ Կենտրոնական, Հարավարևելյան Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի երկրները: Բնականաբար այս բաժանման մեջ կարևորը ոչ այնքան աշխարհագրական սահմաններն են, որքան աշխարհաճանաչման կերպը, արժեքային կողմնորոշումները, տնտեսական, քաղաքական կառուցվածքները և այլն:

Իհարկե, կարևոր են տվյալ ժողովրդի մշակույթի սահմանների որոշարկումը, նրա դիրքը ճշտելու հանգամանքը: «Մինչդեռ, եթե ուզում ենք, որ մեր մշակույթը նոր զարգացում ապրի, ապա այն պետք է ճանաչի ինքն իրեն,- գրում է Հ. Էդոյանը,- վերածվի ինքնաճանաչող մշակույթի, զգացական-էքստազայինից անցնի ինտելեկտուալ-վերլուծականի»²: Անտարակույս, հայկական մշակույթն ունի իր ինքնությունը, կառուցվածքային որակները, որոնք ձեռք է բերել քրիստոնեական համակարգի ծիրում, և դրանից դուրս պատկերացնել նրա գոյությունը անհնարին է: Անտեղի են Արևմուտքին հա-

¹ St' u **Библер В. С.**, Культура. Диалог культур (опыт определения). Вопросы философии, 1989, № 6, էջ 31-42:

² **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Ե., «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», 2009, էջ 337:

կադրվելու ճիգերը՝ մեր ինքնությունը պաշտպանելու նպատակով: Անկախ մեր ցանկությունից՝ մշակութային քրիստոնեական համակարգը ձևավորել է ընդհանուր քրիստոնեական համակարգը կազմող իր արևմտյան և արևելյան ենթահամակարգերը, և անհնարին է այդ թևերից որևէ մեկը տեղափոխել ոչ քրիստոնեական համակարգ: Դա է պատճառը, որ մեր մշակույթի արմատները թեև Արևելքում են, բայց այն ներառում է նաև Արևմուտքի քրիստոնեական համակարգին բնորոշ որակներ: Մյուս կողմից էլ ասել, թե մենք միայն արևմտյան մշակույթի համակարգի մեջ ենք մտնում, նշանակում է շատ բան բացառել մեր ինքնությունից:

Վերջին հաշվով աշխարհագրական սահմանները չեն կարող որոշել մշակույթի տարածման արեալը: Քրիստոնեությունը չի կարող լինել միայն Արևմուտքում, մանավանդ որ այն առաջացել է Արևելքում, նույն կերպ՝ մուսուլմանական մշակույթը չի կարող միայն Արևելքում լինել: Պատահական չէ, որ քրիստոնյա հայրերն իրենց մեկնություննում հաճախ են տարբերակում քրիստոնեության արևելյան և արևմտյան ճյուղերը:

Այսպես, օրինակ, Արևելքը, հետևելով առաքելական Հովհաննեսի ավանդույթին, մեղքը դիտում է որպես վիճակ, դրություն. ոչ միայն մարդը, առանձին վերցրած, այլև «աշխարհը» մեղքի մեջ է (Հովհաննես 1:29): Մինչդեռ Արևմուտքն ավելի մոտ է Պողոս առաքյալի ավանդությանը, որտեղ մեղքն անձնավորված է. «Մեղքը մարդով աշխարհի մտավ» (Հռոմ. 5:12):

Բնականաբար, ուսումնասիրություններ են գրվում և՛ Արևմտյան, և՛ Արևելյան քրիստոնեության մասին¹: Ինքնին հասկանալի է, որ այս երկուսն էլ մտնում են մեկ ընդհանուր՝ Քրիստոնեական համակարգի մեջ:

Հարցի քննարկման տեսանկյունից բացառիկ է Գրիգորի Պոմերանցի առաջադրած մեթոդաբանությունը: Չափանիշ-

¹ St' u **Шпидлик Ф.**, Духовная традиция восточного христианства. Систематическое изложение Centro Aletti - Paoline, M., 1999, 406 էջ:

ները հստակ են: «Առաջին՝ միասնական սուրբ գրություն: Դա կարող է լինել և՛ Կոնֆուցիուսի ասույթների կառույցը, և՛ Աստվածաշունչը: Երկրորդ՝ ամեն մշակութային աշխարհ ծածկված է միասնական լեզվով և գրով»¹: Հեռավոր Արևելքում լեզուն և գիրը համընկնում են: Հիերոգլիֆային մշակույթների սահմանները հեռավորարևելյան մշակույթների սահմաններն են:

Իսլամի աշխարհը Ղուրանն է, արաբերենը, արաբական գիրը, որ պահպանվել է պարսկական, թուրքական և ցանկացած ուրիշ լեզուներում, որով խոսում են իսլամական մշակույթի կրողները: Արդյունքում Տեքստի, Լեզվի և Բառի(գրի) միասնությունը ստեղծում է տեղեկատվության միասնական դաշտ...՝ ընդհանուր հոգևոր բովանդակությամբ: Նույնը կատարվում է լատինական աշխարհի հետ, որ որոշարկվում է լատինական Աստվածաշնչով, լատիներենով ու լատինական գրով: Լատիներենը եվրոպական շատ լեզուների հիմքում է և այս կամ այն կերպ մասնակցել է եվրոպական այլ լեզուների ձևավորմանը:

Չինական հիերոգլիֆները սերտորեն կապված են չինական նկարչությանը, տեքստին: «Իզուր չէ, որ տառատեսակի արաբական գրությունը ասոցացվում է նախշի, դեկորի հետ: Միննույն ժամանակ, լատինական գիրը ավելի մոտ է լատինական ճարտարապետության ոճին»²:

Պոմերանցը խոսում է նաև բյուզանդական մշակույթի մասին և սեփական տեսանկյունից մեկնաբանում դրա անկման պատճառը. Լեզվի, Տեքստի և Գրի միջև եղած նախնական կապի խզումը դարձավ ճակատագրական. հունարենով

¹ **Шемакин Я.Г.**, Субэкумены и “пограничные” цивилизации в сравнительно-исторической перспективе: о характере соотношения Языка, Текста и Шрифта. Общественные науки и современность, М., 2014, № 2, с. 115.

² **Померанц Г.С.**, Великие нации живут мировыми задачами // Западники и националисты: возможен ли диалог?, Материалы дискуссии. М.: ОГИ, 2003, с. 125-126.

գրված Սուրբ Տեքստի թարգմանությունն այլ լեզուներով կործանեց այդ մշակույթը¹: Չխորանալով այս մոտեցման ներքին հակասությունների մեջ՝ ասենք, որ հեղինակը դիտարկում է և ռուսական մշակույթը որպես սահմանագծային երևույթ և տալիս է դրա պատկերավոր բնութագիրը: Այդ մշակույթը սոխ է, որի յուրաքանչյուր շերտ կարևոր է և չի կարելի մի կողմ նետել: Այս ձևակերպումը իրապես բնութագրում է այն երևույթը, որ իր մեջ ունի ինչպես Արևելքին, այնպես էլ Արևմուտքին բնորոշ շերտեր: Բացակայում է կենտրոնը սոխի մեջ, բայց դա չի բացառում, որ դրա յուրաքանչյուր շերտ կարևորվի և ամբողջական դարձնի այն: Ի վերջո, նման կարգի մշակույթների համար առավել բնորոշը *բազմազանության գերակշռությունն է միասնության սկզբունքի հանդեպ*² (ընդգծումն իմն է – Վ.Գ.):

Այս մոտեցմամբ հայ մշակույթը ներկայացնող երեք հիմնական չափանիշները՝ Սուրբ Տեքստը, Լեզուն և Գիրը հստակորեն առանձնացնում են դրա սահմանները:

Սուրբ Տեքստը, Լեզուն և Գիրը մեր մշակույթի պատմության մեջ սերտ փոխկապվածության մեջ են, և ոչ պատահականորեն հայերենը դիտվել է որպես Սուրբ լեզու կամ Աստվածաշնչի լեզու: Երևի ոչ մի լեզու այնքան մոտ չի Սուրբ Տեքստին՝ Աստվածաշնչին, որքան հայերենը: Ինչ վերաբերում է Գրին, ապա այն տարբերվում է շրջապատի ժողովուրդների գրերից, էլ չենք խոսում եվրոպականի մասին: Դրանք ինքնության վստահելի ցուցիչներ են: Նույնիսկ 18-րդ դարի սկզբին, երբ անհրաժեշտություն առաջացավ վերածնել մեռնող մշակույթը և հրամայական պահանջ էր աշխարհաբարով գրելը, Մխիթարյան հայրերը վերադարձան Սուրբ Գրին: Համաշխարհային մշակույթների պատմության մեջ դա բացառիկ երևույթ էր: Միջին հայերենից անցում կատարվեց գրաբարին և ոչ աշխարհաբարին: Այն երկու դար շարունա-

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 126:

² Տե՛ս **Шемякин Я.Г.**, նշվ. աշխ., էջ 119:

կեց իր գործուն ներկայությունը մեր գրականության պատմության մեջ:

Այսպիսով, Սուրբ Տեքստի կամ Աստվածաշնչի, Լեզվի և Գրի միասնությամբ հայ մշակույթը տիպիկ Արևելյան է՝ իր ավանդական, ինքնահատուկ, ներփակ ամբողջությամբ:

Արևելքի տնտեսական զարգացման օրինաչափությունները վաղուց են ուսումնասիրվել: Հեգելն այստեղ նկատեց երևույթներ, որոնք նման չէին Հին Հունաստանին, Հռոմին և միջնադարյան Արևմտյան Եվրոպային: Արևելքում փոփոխությունները կատարվում են խիստ դանդաղ, նորացման ուղին անցնում է բոլորաշրջանով (ցիկլային): Մարքսը, ելնելով այս դիտարկումից, ի վերջո արևելյան տնտեսությունը բնութագրեց որպես «ասիական», որտեղ մասնավոր սեփականատիրական հարաբերություններն առաջնային չէին: Արտադրության միջոցների սեփականատիրոջ գործառույթն իրականացնում էր պետությունը, որն անձնավորում էր բարձրագույն իշխանությունը: Պետությունը տիրակալի աստվածացած կերպարն էր, մեծագույն դեսպոտը: Մարքսը, հետևելով Հեգելին, գործածում է «համատարած ստրկություն»¹ բառակապակցությունը, որը բնորոշ չէր Եվրոպային: Մասնավորապես Հայաստանի տնտեսությունը պարսկական ու թուրքական դարավոր տիրապետությունների ժամանակաշրջաններում բնութթով եղել է ասիական: «Համատարած ստրուկները» հարկ են վճարել պետությանը, եկեղեցուն:

Խիստ կարևոր է նաև քրիստոնեության խնդիրը, որ շատ կրոնների, փիլիսոփայական ուղղությունների հետ առաջացավ Արևելքում և լայն տարածում գտավ Եվրոպայում: «Քրիստոնեությունը բազմաթիվ արմատներ ունի հին Արևելքի մշակույթում, որտեղից էլ քաղել է առասպելական և ծիսական-դոգմատիկ հարուստ ներուժը: Ի դեմս առանձին եկեղեցիների՝ լինի հայկական, դպտի, թե սիրիական, և աղանդները»

¹ **Васильев Л.С.**, История религий Востока, М., «Высшая школа», 1988, с. 22.

րի (նեստորականներ և այլն), մինչ հիմա գործում են Արևելքի մի շարք շրջաններում...»¹:

Քրիստոնեությունը՝ որպես վերագգային երևույթ, առաջացավ Մերձավոր Արևելքն ու Միջերկրական աշխարհը միավորած վերագգային Հռոմեական կայսրության շրջանակներում: Այն առաջացավ ոչ թե պետության կենտրոնում, այլ արևելյան և հարավարևելյան ծայրամասերում, որտեղ «հատկապես հզոր էին մշակութային ավանդույթի շերտերը և որտեղ մշտապես կենտրոնացած էին տարբեր գաղափարա-մշակութային ազդեցությունների հատման կենտրոնները»²:

Դիտարկումը տեղին է: Այն ժողովուրդները, որոնք անցյալի մեջ ձևավորված հարուստ մշակույթ ունեին, և առավել մեծ էին դրանց վրա ուղղված ամենատարբեր ազդեցությունները թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական իմաստներով, հարկադրված էին կողմնորոշվել:

Հայաստանն այս իմաստով դասական օրինակ է: Արևելքում պետություն, ավանդույթներ, մշակույթ ստեղծած ժողովուրդն առաջինն է ընդունում քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Մարտահրավերներն այնքան շատ էին, որ «մեծ աշխարհին» միանալը հրամայական պահանջ էր: Չորրորդ դարից սկսած՝ մեր նկարագիրն իր մեջ սկսում է ավելի հետևողականորեն ներառել համաքրիստոնեական, հումանիստական գաղափարներ: Հայաստանն այդպես ինտեգրվում է քրիստոնեական մշակութային համակարգին՝ չեզոքացնելով բազմաթիվ վտանգներ, բայց և հարկադրված լինելով դիմագրավել նորանոր փորձություններ:

Այս իմաստով հայ ժողովրդի արարած մշակույթն իր բնույթով նման է «սահմանագծային» մշակույթներին, որոնցում բախումը մշտապես առկա է ու չնահանջող: Այդ ընթացքում տարբեր ժողովուրդների ձեռքբերումները, աշխարհա-

¹ Նույն տեղում, էջ 89:

² Նույն տեղում, էջ 90:

յացքային մոտեցումները փոխազդում են և փոխառվում են մեկը մյուսից:

Տեսական միտքը առանձնացրել է այն հիմնական որակները, որոնք բնորոշ են արևելյան և արևմտյան քաղաքակրթություններին:

Արևելքում, անկախ ցնցումներից, քաղաքակրթության հիմքերը մնում են անսասան, երկրորդ եվրոպացիները իրենց տարանջատում են բնությունից, Արևելքում երբեք չեն կտրվում միջավայրի հետ կապերը: Երրորդ ավանդույթին հավատարիմ մնալը Արևելքի համար առաջնային է: Եթե կրոնը Արևելքում ինքնակատարելագործման ուղի է, որ հանգեցնելու է և միջավայրի կատարելագործմանը, ապա Արևմուտքում քրիստոնեական Աստված ստեղծել է աշխարհը, մարդկանց և իշխում է նրանց վրա:

Եվրոպական մշակույթի բնույթը մարդաբանական է, անհատի ազատությունը դառնում է այդ մշակույթի հիմնական արժեքը: Կյանքի սովորական ընթացքը փոխելու, նախաձեռնողականությամբ հանդես գալու, գիտելիք ձեռք բերելու սկզբունքները կարևոր են եվրոպացու համար:

Եվրոպական մշակույթի տիպին հատուկ է իշխանության բազմակենտրոնությունը, իշխանությունը ցրվում է հասարակության մեջ, մի դեպքում իշխանության տարբեր ձևերի հարաբերական անկախությամբ, նաև դրա սահմանափակման պայմաններով:

Եվրոպականությունը մտածողության այնպիսի ձև է, երբ ամեն խնդիր դիտարկվում է եվրոպական համատեքստում, երբ տարբեր ազգերի ու մշակույթների համագործակցությամբ ձևավորվում են միավորումներ՝ ՆԱՏՕ, ՄԱԿ, Միջազգային Կարմիր խաչ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն և այլն:

«Քրիստոնեական եկեղեցին որպես ինստիտուտ միավորեց Եվրոպան «վերևից». պապական իշխանության տարածման միջոցով Եվրոպայում ստեղծեց անդրազգային կառույց,

որը նպաստեց միասնական եվրոպական մշակույթի ստեղծմանը: Քրիստոնեական հավատքը միավորեց Եվրոպան «ներքևից». ձևավորեց մի տեսակ «ընդհանուր եվրոպական գիտակցություն», աստիճանաբար դուրս բերեց տարասեռ դիցաբանությունները՝ դրանք փոխարինելով մեկ կարգավորված աշխարհայացքով, ինչը նույնպես նպաստեց միասնական մշակույթի ձևավորմանը»¹:

Արևելքում քրիստոնեական եկեղեցին պահպանում է իր ինքնությունը ու եթե ունի դավանաբանական ինչ-ինչ առանձնահատկություններ, ապա դա չի նշանակում, որ այն ձևավորում է առանձին մշակութային համակարգ, այն մտնում է մեկ ընդհանուր՝ քրիստոնեական մշակութային համակարգի մեջ: *Այն ժամանակ, երբ Հայաստանը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, նպատակը ոչ թե արևելյան, ասիական ժողովուրդներին, այլ քրիստոնեական արժեքներով առաջնորդվող ժողովուրդներին միանալն էր:* Բայց այս ընթացքը չի նշանակում, թե եկեղեցին բացառում է սեփական ինքնությունը: Լավագույնը Նարեկացու օրինակն է. «Մատյան ողբերգության» պոեմը իր կառուցվածքային առանձնահատկություններով, իր լեզվամտածողական հոգեհներգիայով մտնում է քրիստոնեական միջնադարի հոգևոր գրականության սիստեմի մեջ՝ մոտենալով Ավգուստինոս Ավրելիոսի «Խոստովանանքին»: Մյուս կողմից՝ այն արտահայտում է մոնոֆիզիտ (միաբնակ) եկեղեցու աշխարհընկալումը (կամ աստվածընկալումը)»²:

Երևույթները համադրել է պետք և ոչ թե գնալ քաղաքակրթության միակողմանի արմատավորման ճանապարհով, ասենք, երբ «ազգային երևույթների շրջանակից ձգվում-արտամղվում են կենսաբանական-ցեղայինն ու հո-

¹ Теория культуры в вопросах и ответах: учебное пособие для студентов / колл. авт.; под ред. Н.Б. Шебаршовой и С.М. Богуславской. - Изд. 2-е, перераб. Оренбург: ИПК ГОУ, 2009, с. 81.

² Էդոյան Հ., նշվ. աշխ., էջ 340:

գերանական-ժողովրդայինը, որի հետևանքով նրանք, սակայն, ոչ թե վերանում են, այլ վերադրսևորվում առավել այլասերված կամ հակազդեցիկության ձևերով՝ վայրի բնագոյությունում, քաղքենիական սրտաճմլիկ զգացմունքայնությամբ»¹:

Էդվարդ Աթայանի վերլուծությունները տարվում են ժողովրդային-ազգայինի և տիեզերաքաղաքացիականի թևերի չափավոր գործադրման ուղիով: Դրանցից մեկի գերազնահատումը ազգային որակները տարրալուծում է ընդհանուրի մեջ կամ սահմանափակում «քարանձավային հոգեբանության» մանրաշխարհով:

Նկատի առնելով հայ մշակույթի սահմանագծային բնույթը՝ հարավից՝ իսլամական, արևելքից՝ հնդարիական, հյուսիսից, արևմուտքից՝ անհատական, անխուսափելի են տարբեր ազդեցություն-ներթափանցումները և դրանց արդյունքում ծնվող ներքին հակասությունները:

Դարերի ընթացքում տևական բախումների կիզակետի վերածված հայ ժողովուրդը եղել է «համաշխարհային փորձարկու», իսկ երկիրը՝ «փորձադաշտ» (Աթայան): Շատ բաներում առաջինն ենք՝ քրիստոնեություն, վերածնունդ, ճարտարապետական որոշ ձևեր, նոր հազարամյակի շեմին՝ ժողովրդավարության նոր ձևերի «պայթյունանման ծավալում» և այլն: Մեր անհաջողություններն ու այդքան զոհերը հեղինակը բացատրում է հենց «առաջինը լինելու» հանգամանքով: Եվ քչերն են անգամ մեզանում հասկանում Նարեկացու տիեզերածավալ (Էքսպիրեմենտի) և ոչ թե զուտ ազգային ընդգրկումը ու նաև մեր անարդարացի դժգոհությունը այլազգիների կողմից անգամ Նարեկացու մակարդակով չընկալվելու և չգնահատվելու համար, «քանի որ ոգեղեն սերմերը, մարմնեղենների նման, կարող են այդպիսին մնալ ու ծլել միայն խա-

¹ **Աթայան Էդ.**, Հոգի և ազատություն, Եր., «Սարգիս Խաչենց», 2005, էջ 200-201:

վարի ու լռության առեղծվածայնությամբ տոգորված միջավայրում»¹:

Տարբեր մշակույթների հատման կետում հայտնված Հայաստանի տիպի գոտիներում ներքին փոխլրացնող միտումները հանդես են գալիս խաչի տեսքով՝ «զգայական եզակիության բնական միտումը» մեր մեջ խտանում է հարավային էթնիկական գոտու շփմամբ՝ հելլենիստական Փոքր Ասիա և Բյուզանդիա, հետագայում արաբական խալիֆաթ, այժմ՝ մուսուլմանական աշխարհը: Այս միտումին ավելանում է զգայական սկզբունքի միջնորդավորված դրսևորումը՝ նյութական արժեքներ կուտակելու իմաստով:

Հանրային ընդհանրության «դատողային միտումը» խթանվում է հյուսիսից՝ համայնավարական ուսմունքով: Այս միտումը Աթայանը իրավամբ կապում է դարեր շարունակ Հայաստանում գոյություն ունեցող նահապետական առաքինությունների հաստատման հետ, որ զգալիորեն զիջել է դիրքերը առաջինի ազդեցությամբ, գրականությունն արձանագրել է այդ կացությունը (Հովհաննես Թումանյան, Հրանտ Մաթևոսյան):

Միտումների խաչի մյուս բևեռաձողը ձգվում է հնդարիական Արևելքից (համընդհանուր բնության միտում, որ մեզանում և Եվրոպայում սոսկ տեսական նշանակություն է ստացել) մինչև եվրոպական, «հոգևոր առումով մեզ համար նույնքան բնաշխարհիկ Արևմուտք (անհատականացված ժողովրդական ոգիների միտում)»²:

Այս դիտարկումները համակողմանիորեն ներկայացնում են այն մշակութաբանական ինքնակայացման ազդակները, որոնք ստանում է հայ ժողովուրդը և սեփական ինքնության մեջ բեկելով՝ կայացնում է իր մշակույթը:

Ընդունելով վերոհիշյալ դիտարկումները՝ կարող ենք ասել, որ արևմտյան և արևելյան մշակույթների հակադիր

¹ Նույն տեղում, էջ 214:

² Նույն տեղում, էջ 233:

սկզբունքների համադրությունը ձևավորում է հայոց մշակույթին բնորոշ խիստ բևեռացումը՝ անհատականի և ընդհանուրի միջև: Ընդհանրության «դատողական միտումը», որ դարերով նահապետական առաքինությունների ձևով այդ մշակույթի խորքում է և բնույթով արևելյան, խստորեն ենթարկվում է արևմտյան անհատականության ներգործությանը: Կոլեկտիվիզմի և անհատականության՝ միմյանց հակադիր որակների համադրումը մեր մշակույթի կարևոր առանձնահատկությունն է: Դա կա ինչպես Թումանյանի ստեղծագործության մեջ, այնպես էլ Չարենցի ճակատագրական կոչի մեջ՝ փրկությունը տեսնելով «հավաքական ուժի մեջ»: Մաթևոսյանը տալիս է երևույթի բացառիկ օրինակ: Ընդհանուրի և անհատականի համադրումը գերխնդիր է մեր մշակույթի համար:

Այս ներքին հակասականությունը, որ պայմանավորում է այդ մշակույթի մասնատվածությունը և որոշակիորեն խախտում է ամբողջականությունը, ունի մեկ այլ առավելություն՝ այն ընդգրկում է երևույթների ամբողջ երանգապնակը՝ մի ծայրահեղությունից մյուսը: Երևույթը մոտավորապես նույնն է, ինչ ռուսականի պարագայում, ինչի մասին խոսել է Բերդյաևը:

Նախաքրիստոնեական ողջ մշակույթը հիմնահատակ ավերելն ու դրա փլատակների վրա նորն ստեղծելու ջանքերը խոսում են հենց ծայրահեղականության մասին, թեև հետագա դարերի ընթացքում մեր մշակույթին խորթ չէ նաև միտումը դեպի ներդաշնակություն, ծայրահեղությունները կարող են տեղի տալ միջին չափումների առաջ:

Բնագանգականից խորշանքը մեր նկարագրին բնորոշ երևույթ է, դրա համար էլ դժվարանում ենք քաղաքականությունը տարբերել քաղաքականություն խաղալուց, սերը համակրանքից և այլն: Մեր մշակույթը փոխազդեցությունների հետևանքով ներառել է որակներ, որոնք բնորոշ են տարբեր աշխարհաքաղաքական պայմաններում գտնվող ժողովուրդների: Այն չի կարող սահմանազատ միջավայր լինել: *Մենք*

Քրիստոնյա Արևելք ենք, որն ամբողջացնում է Համաքրիստոնեական մշակութային համակարգը: Մենք, չորրորդ դարից սկսած, միացել ենք համաքրիստոնեական համայնքին, բայց եթե անտեսենք այն որակները, որոնք բնորոշ են Արևելքին կամ այն մշակույթներին, որոնք սահմանագծային են, ապա հազիվ թե դրա պատկերը լինի ամբողջական ու նաև համոզիչ:

Հայ ժողովրդի մշակույթը մշտապես ձևավորվել է գործուն շփումների արդյունքում: Այն ներառում է առասպելական շրջանից մինչև մշակույթների նոր շրջափուլերն ընդգրկող ժամանակները: Այն չի «մոռանում» անցյալ դարձած ժամանակի շերտերը, դրանով էլ բացատրվում է երևույթի ինքնատիպությունը՝ մնացյալ մշակույթների հանդեպ չափավոր զգուշությամբ ու նաև դրանցով հարստանալու ներքին միտումով:

Այս իմաստով հետաքրքիր է «Սասնա ծռեր» էպոսը՝ որպես տարբեր ժամանակների ու մշակութային շերտերի ամբողջություն:

Մանրամասնությունների մեջ չմտնելով՝ ասենք, որ Արևելքի և Արևմուտքի հիմնական հակասությունը, որ ավելի շուտ հակադրամիասնություն է, *ժողովրդական ընդհանուր ոգու և անհատականության փոխհարաբերության հարցն է:* Այս ծայրաթևերը տարբեր չափաբաժնով են հանդես գալիս տարբեր մշակույթներում: Առավել ևս էպոսներում:

«Սասնա ծռեր» էպոսը, եթե անգամ անտեսենք այն տարբերակները, որտեղ Դավիթը իրեն Արևելքի թագավորի որդի է համարում, Մելիքի վրա հարձակվում է Արևելքից¹, մեկ այլ դեպքում հերոսն սպանում է Արևմուտքի թագավորին (համահավաքում Ծովինարը տղաներին ապսպրում է Հայոց թագավորի քաղաքը գնալ, որ Արևելից թագավորի երկիրն է)², իր

¹ Տե՛ս **Տաթևնցի Կրպոտ**, Սասունցի Դավիթ կամ Միեթի դուռ // Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ, Եր., «Էդիտ պրինտ», 2008, էջ 20:

² Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, «Լույս», Եր., 1981, էջ 21:

բովանդակության ուղղվածությամբ ու ներքին փիլիսոփայությամբ կայանում է Արևելքի փիլիսոփայության ծիրում: Մենք չունենք տարբերակ, որտեղ հերոսը իրեն Արևմուտքի թագավորի գավակ է համարում: Նույնիսկ այս արտաքին ակնհայտ նշանները դիպվածային համարելու դեպքում էլ իր ներքին փիլիսոփայությամբ «Սասնա ծռերն» անկասկած կայացել է Արևելքի մտածողության, հոգեբանության ծիրում՝ իհարկե չմոռանալով Արևմուտքը՝ անհատականությունը շեշտելու հետևողական ձեռնարկումով:

«Ծռերի» ամբողջ կառուցվածքային հենքը ծավալվում է ոչ թե տարածական չափումների, այլ ժամանակային մոդուսի ծիրում: Ամբողջ Արևմուտքը գերազանցապես հետևում է հոմերոսյան տարածական ծավալումների օրինակին: Արևելքը հենվում է ժամանակի վրա: «Ծռեր»-ում ժամանակը հավերժական է, քանի որ Արևելքը հետևում է առակի պոետիկային: Առակի իմաստը դուրս է գալիս դրա բովանդակության սահմաններից: Աստվածաշնչյան աշխարհը հենց առակի պոետիկա է, որ ծավալվում է Հիսուսի կամ մարգարեների բերանով: «Ծռերի» իմաստը դուրս է նրա սահմաններից: Միերը կերպարից անցում է կատարել դեպի խորհրդանիշ-կերպար:

Երկրորդ՝ եթե եվրոպական էպոսներում խոսքն առավելապես պատմական ժամանակի մասին է, որի արդյունքում խոսվում է շատ որոշակի հերոսների մասին, ապա Արևելքի բանահյուսությունը գերազանցապես խոսում է *քաղաքակրթական ժամանակի* մասին, որ շատ ավելի մեծ շրջափուլ է: Խոսքը վերաբերում է ինչպես «Գիլգամեշին», «Ավեստային», «Ծռերին», այնպես էլ Աստվածաշնչին:

Երրորդ՝ Փոքր Միերը ամբողջացնում է էպոսի փիլիսոփայությունը, առասպելական հերոսը ոչ թե գնում է հասարակական կարգը վերափոխելու ճանապարհով, որի հնարը նա չունի, և որը բնորոշ է Արևմուտքին, այլ հույսը դնում է մարդու կատարելագործման վրա, իսկ այստեղ հերոսություն պետք չէ, գլխավոր գործոնը և նախապայմանը մնում է Ժա-

մանակը (սա բնորոշ է Արևելքի մշակույթին), որը կվերափոխի մարդուն, և արդեն վերաշինված աշխարհը Միերին հավերժական քուն կպարզևի:

Չորրորդ՝ «Ծոերում» կրկնվող մեղքը վերածվում է ճակատագրի, և ձևավորում է ընդհանուր վիճակ, իսկ Արևմուտքում այն անհատական բնույթ ունի: Ճակատագիրը արևմտյան բանահյուսության մեջ անձնավորված է, ինչը հայ բանահյուսության մեջ բացառված է. ծագում է մարդուց և վերադառնում դեպի մարդը (Կողբացի)¹:

Հինգերորդ՝ Էպոսի կառույցում գերակա նշանակություն ունի ավանդույթը՝ իր դրական և բացասական հետևանքներով: Ավելորդ է ասել, որ սա ևս Արևելքին բնորոշ որակ է: Ավանդույթը նախընտրելի է ազատությունից, ինչը չէինք ասի Արևմուտքի մասին:

Վեցերորդ՝ ծիծաղը՝ որպես աշխարհընկալման կերպ, իր փիլիսոփայությամբ տարբերվում է եվրոպական Էպոսներում ի հայտ եկող անհատական ծիծաղից: Արևելքը կայացնում, ամբողջացնում է ծիծաղի սեփական փիլիսոփայությունը, որն արտահայտվում է *հիմարության սխրանքի մեջ*: «Ծոերն» այս իմաստով Արևելքի ծիծաղի բարձրակետն է, որտեղ խոսքն ավելի ծուռ մարդկանց պատմության մասին է՝ անկախ այն հանգամանքից, որ ծուռը ընկալում ենք որպես խնդիրները լուծելու ինքնահատուկ ճանապարհ: Դ. Դեմիրճյանը ծուռը հավասարաթեք էր համարում «հանճարեղին»² և չէր սխալվում: Ռուսական բանահյուսության մեջ ամենատարածված հերոսը Իվան Հիմարիկն է, որ միշտ հաղթող է դուրս գալիս, հայ բանահյուսության մեջ հեքիաթի գլուխգործոցներ-

¹ Տե՛ս **Grigoryan V., Arakelyan A., Iskandaryan N., Kosyan A.**, Interpretation of fate and guilt in Armenian and European epics, *Wisdom*, 2(22), 2022, Yerevan, էջ 270:

² Տե՛ս **Ղերենիկ Դեմիրճյան**, «Սասունցի Դավիթը» բազմադարյան կյանքի ստեղծագործություն, Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հատոր XII, Եր., Հայկական ՍՍՀ հրատ., 1985, էջ 185:

րից մեկը Թումանյանի մշակած «Քաջ Նազարն» է, որը ևս կառուցված է «հիմարության սխրանքի» տրամաբանությամբ, իսկ երևույթի ամբողջական արտահայտությունը «Սասնա ծռերն» է, որտեղ վերնագիրն իսկ դրա վկայությունն է:

Ծիծաղի նախնական, արքետիպային վիճակը, որտեղ առաջնայինը ծիծաղելի օբյեկտի նկարագրությունն է, դառնում է «Սասնա ծռեր»-ին բնորոշ որակ: Մինչդեռ եվրոպական էպիկական երկերում, չբացառելով ծիծաղի օբյեկտը, գնալով կարևորվում է ծիծաղի սուբյեկտի՝ ծաղրողի և ոչ թե ծաղրվողի նշանակությունը:

«Նիբելունգների երգ»-ի բովանդակության ներքին ողբերգական ներուժը արտահայտված է պատերազմող կանանցից մեկի հուսահատության աղաղակի և մյուսի ծաղրական ծիծաղի պայթյունի մեջ¹:

Այս ամենը վկայում է, որ հայկական էպոսի շերտերում հիմնավոր նստած է Արևելքը, որ իր մեջ ներառում է և Արևմուտքը, որը գերազանցապես արտահայտվում է էպոսի չորրորդ ճյուղում, որտեղ առաջ է մղվում հերոսի անհատականության, նրա ողբերգականության թեման: Մեծերը միակ հերոսն է, որ ամբողջ խորությամբ զգում է մարդու կործանման ողբերգությունը: *Հայ մշակույթը, որպես սահմանագծային երևույթ, զգայուն է սեփական ինքնության պահպանման ու նաև այլ մշակույթներից եկող ազդակների հարցում:* Այն իրապես երկդեմ Յանուս է՝ սեփական ինքնության մեջ խորանալու մտահոգությամբ ու նաև դրսի աշխարհին հաղորդակցվելու միտումով: Այս շերտերի անտեսումը մեզ կպահի թյուրիմացության մեջ, մինչդեռ ինքնագիտակցումը, սեփական տեղի, դիրքի ճշգրտումը կարևոր է սեփական մշակույթը ճիշտ ընկալելու ճանապարհին:

¹ См. у **Хойслер А.**, Германский героический эпос и сказание о Нибелунгах, М., Иностранная литература, 1960, էջ 61:

Գրականություն

1. Աթայան Էդվարդ, Հոգի և ազատություն, Երևան, «Սարգիս Խաչենց», 2005
2. Դեմիրճյան Դերենիկ, «Մասունցի Դավիթը» բազմադարյան կյանքի ստեղծագործություն, Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հատոր XII, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1985
3. Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», 2009
4. Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ, Երևան, «Էդիտ պրինտ», 2008
5. Մասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, «Լույս», 1981
6. Бахтин М.М. Проблемы поэтики Достоевского. Москва, Сов. Россия, 1979. с. 75
7. Библер В.С., Культура. Диалог культур (опыт определения). Вопросы философии, 1989, № 6, С. 31-42
8. Васильев Л.С., История религий Востока, М., «Высшая школа», 1988
9. Волкова А. А., Философское понимание диалога культур в концепциях М.М. Бахтина и В.С. Библиера: сравнительный анализ, Журнал: Logos et Praxis, Статья в выпуске: 4 т. 18, 2019
10. Померанц Г.С., Великие нации живут мировыми задачами // Западники и националисты: возможен ли диалог?, Материалы дискуссии. Москва, ОГИ, 2003
11. Теория культуры в вопросах и ответах: учебное пособие для студентов / колл. авт.; под ред. Н.Б. Шебаршовой и С.М. Богуславской. - Изд. 2-е, перераб. Оренбург: ИПК ГОУ, 2009
12. Шемякин Я.Г., Субэкумены и “пограничные” цивилизации в сравнительно-исторической перспективе: о характере соотношения Языка, Текста и Шрифта. Общественные науки и современность, Москва, 2014, № 2
13. Шпидлик Ф., Духовная традиция восточного христианства. Систематическое изложение Centro Aletti - Paoline, Москва, 1999

14. Хойслер А., Германский героический эпос и сказание о Нибелунгах, М., Иностранная литература, 1960
15. Grigoryan V., Arakelyan A., Iskandaryan N., Kosyan A., Interpretation of fate and guilt in Armenian and European epics, Wisdom, 2(22), 2022, Yerevan, P.270

■ ВАЧАГАН ГРИГОРЯН

ВОСТОК В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

Резюме

Со временем сформировались две ветви христианской культуры: восточная и западная, которые вместе и сплелись в единую христианскую ценностную систему. Эти две ветви, имея в основе мирознания христианство, в определении и осмыслении явлений создали самобытные средства, которые скорее свойства идентичности, выраженные в Священных Текстах, Языке и Письменах, как присущие восточной культуре качества. Именно в их симбиозе суть армянской культуры и ее самобытного эпоса «Сасна Црер», в котором явления представлены со свойственными Востоку особенностями, а именно: ход событий носит временной, а не пространственный характер («Гилгамеш», «Авеста», «Црер» а также «Библия»), в которых время является как бы сгустком ступеней цивилизации. Маленький Мгер идет не по пути изменения общественного порядка, а стремится сделать человека совершенным. Время изменит человека и сам мир, вследствие чего герой удостоится вечного сна.

В эпосе «Црер» повторяющийся грех становится судьбой, формируя общее состояние, на Западе же, это свойство имеет личностную природу.

Архитип смеха, в котором первичным является описание объекта смеха, становится качественным определением для «Сасна Црер». В то время как в европейском эпическом жанре наряду с объектом смеха, большая значимость придается субъекту смехонасмешнику.

Ключевые слова: *Священный Текст, Язык, Письмена, Запад, Восток, временное и пространственное измерение, «Сасна Црер», Маленький Мгер*

■ VACHAGAN GRIGORYAN

THE EAST IN THE EPIC OF «SASNA TSRER»

Summary

Over time, the two sides of Christian culture emerged: East and West form the system of Christianity. These wings, with Christianity at the core of their world-knowledge, have created their means in the field of expression of phenomena and their meanings, and the further nature of identities expressed within the unity of sacred texts, languages, and Scriptures. Represents and characterizes the quality of Oriental culture. Armenian culture is distinguished by its unity, the result of which is the epic poem "Sasna Tsrer", which has an oriental character in its representation of phenomena. Time and non-spatial dimensions of the development of phenomena ("Gilgamesh", "Avesta", "Tsrer", "Bible") condense civilizational cycles of time in themselves. Pokr Mher is not aimed at changing the social order (which is typical in the West), but at improving people. Time changes people and the world, after which only the hero will get eternal sleep.

Whereas "Tsrer" recurring sins become destinies and form a common state, in the West they have a separate character.

The archetypal state of laughter in the foreground of the depiction of an amusing subject characterizes "Sasna Tsrer". On the other hand, in European epic works, the subject of laughter, the one who ridicules rather than the one who is ridiculed, is becoming more and more important without excluding the object of laughter.

Key words: *Holy Text, Language, Scriptures, West, East, time and spatial dimensions, Sasna Tsrer, Pokr Mher*

- **Վաչագան Ռաֆիկի Գրիգորյան** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գալատի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, Սևանի Վազգենյան դպրանոցի հայ գրականության դասախոս: Կատարած ուսումնասիրությունները վերաբերում են հայ դասական, նորագույն գրականության հիմնախնդիրներին: Հեղինակ է 60-ից ավել հոդվածների, մենագրությունների՝ «Սուշեղ Գալշոյան. Ստեղծագործությունը», «Լևոն Շանթի դրամատուրգիան», «Հրանտ Մաթևոսյան. Ստեղծագործությունը», «Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը»: 2013-ին արժանացել է «Հրանտ Մաթևոսյան» ամենամյա մրցանակին:

Вачаган Рафикович Григорян - Доктор филологических наук. Заведующий кафедрой армянского языка и литературы Гаварского Государственного Университета, преподаватель армянской литературы Севанской семинарии Вазгенян. Круг научных исследований - вопросы классической, новой и новейшей армянской литературы. Автор более 60-ти научных статей и монографий: «Мушег Галшоян: Творчество», «Драматургия Левона Шанта», «Грант Матевосян: Творчество», «Творчество Левона Хечояна».

Лауреат ежегодной премии «Грант Матевосян» (2013 г.).

Vachagan Rafik Grigoryan - Doctor of Philological Sciences, Professor. Head of the Department of Armenian Language and Literature at Gavar State University, lecturer of Armenian literature at Vazgenian Seminary in Sevan. His research is related to the issues of classical and modern Armenian literature. He is the author of more than 60 articles, monographs: "Musegh Galshoyan. Works", "Levon Shant's Dramaturgy", "Hrant Matevosyan. Works", "Levon Khechoyan's Works". In 2013 he was awarded the annual Hrant Matevosyan Award.

vachik_grigoryan@mail.ru